

ԵՎԻՌՊԱՅԻ ԽՈՂՃՐ

1888-ի երկրաշարժից ավերված Ապիտակի հարավարևելյան մատուցներում նորվեգացիները կառուցեցին բաժակաճ համալիր և սեփուղ, իբրև հայ ու նորվեգական ժողովուրդների բարեկեցության խորհրդանիշ, կաճեցին մեծ գիտնական ու մարդասեր Ֆրիտոֆ Նանսենի կիսանդամը:

Նանսենը հայ ժողովրդի ամենասիրելի անուններից է: Դարասկզբին, երբ մուշեցում էր առաջին աշխարհամարտը, և պատերազմից հետո, որն արժանիորեն հաղթական ավարտեցին Հայաստանի դաշնակից պետությունները, հայ ժողովուրդը միայնակ էր դիմագրավում բոլոր դժվարությունները: Դաշնակից մեծ տերությունները Հայաստան հարցն օգտագործում էին իբրև իրենց նկատում կրն ու շահերը կենսագործելու խաղաշարտ և անտեսում էին պատվի ու բարոյականության անգիր օրենքները: Միայն մի բուն մեծ հումանիտներ՝ գրող, հուզեր բարձի, գիտնական, մուշիս, գովաճագետ, իրենց խղճի, մարդկայնության ձայնը բարձրացրին ի պաշտպանության Հայ դատի: Նրանց շարքում առաջիններից մեկը Նանսենն էր:

Ֆրիտոֆ Նանսենը ծնվել է 1861 թ. հոկտեմբերի 10 ին Նորվեգիայի մայրաքաղաք Քրիստիանիայի Աուտրե-Ֆրոյնե արվարձանում: Երիտասարդ տարիներին սիրում էր գրադմել որսորդությանը, ճամփորդել դահուկներով և հետիտուն: Սրտին մտա էին բնական գիտություններն ու պատմությունը: 1880 թ. ունակական դպրոցի շրջանակներում ընդունվում է Քրիստիանիայի համալսարանի բնագիտական ֆակուլտետը, ուսումնասիրում կենդանաբանություն: 1882 թ. առաջադիմության է պատկանում մասնակցելու կենդանաբանների «Վիկեկ» արշավախմբին և մ ամիս լինում է Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում, ճաշակում գիտական ճամփորդության բերկրանքն ու դժվարությունները: Անդրանիկ ուղևորության օրագրեր կուտնրը, էփուսասարդ օրերի պատկերություններն ու հուշերը իրենց առաջադիմումը գտան նրա վերջին գործերից մեկում՝ «Մովաճների և Եպիտակ արջերի մէջ» (1927 թ.) գրքում:

Գլխամետաղաբանական առաջին նկատությունը, սակայն, Նանսենն առաջով հեղուկ բնագիտական բնագիտական աշխատելու տարիներին: Նրա անդրանիկ աշխատությունը, որը պատկանում էր մեղադրվում հրատարակվում է 1885 թ. «Նորվեգ միջառաջնների անաստամիայի և հիստալոգիայի վրաճերայ» խորագրով: Այնուհետև 1886-ին նա մեկնում է Իտալիա, երկու տարի անց պաշտպանում դեպրեսիոն և առանում դեպրեսիոն գրտական աստիճան՝ կարևոր ներդրում կատարելով կենդանաբանության բնագիտական: 1897 թ. ստացել է պրոֆեսորի կոչում: Լիբերով բազմակողմանի հետաքրքրությունների տեր ու պրայտող երիտասարդ, նա հավասարաբան շարվում է գրականությանը, արվեստով, հետաքրքրվում հասարակական կյանքի հիմնամարտերով:

1888 թ. մայիսի 2-ին Նանսենը ձեռնարկեց իր առաջին ինքնուրույն արշավը՝ դաճուկներով դեպի Գրենլանդիա, ուսումնասիրել և կղզու բնակիչների կյանքները, կենդանական աշխարհը: Արշավախումբը վերադարձավ հաջորդ տարվա մայիսին, և ինչպես նկատել է Համանակակից գիտնականներից մեկը, «Նանսենին բախտ վիճակվեց աշխարհին ցույց տալու այն ժողովրդի արիությունն ու անճնարարությունը, որի գավակներից շատերը անհետ կորել են բնեի ծովերում»: հաջախիկ հաջողության համար մեծ նշանակարհորդն ու գիտնականը բազմաթիվ բարձր պարգևների արժանացավ: Այս արշավանքի արդյունքներից մեկն էր նրա «Էսկիմոսների կյանքը» գիրքը:

1892-ին Նանսենի առասպելյալ «Ֆրանց» ուղևորվեց դեպի հյուսիսային բնու, հայրենիք վերադարձավ 1896-ին, և այդ երկարատև արշավի արդյունքը եղավ անճնարար հետազոտողի հերթական աշխատությունը: 1913 թ. «Կրեկտ» նավով անխուճ հետազոտողը Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ավերով հասավ Հեռավոր Արևելք:

Գիտական մեծ հայտնագործություններն ու սխրանքները հաջորդում էին իրար, նա կազմակերպում էր նորանոր գիտական արշավներ, որոնք պանճացնում էին նրա անունը, և գնալով ավելի ու ավելի էր մեծանում Նանսենի համաշխարհային հռչակը:

Իր քուր աշխատանքների մեջ լինելով խոշորագույն հետազոտող-գիտնական, Նանսենը հավասարապես մեծ էր իրեն հումանիստ, պաշտպանում էր հատկապես փոքր աշգերի իրավունքները: Բնորոշ է, որ առաջին աշխարհամարտի օրերին (1914 թ. հոկտեմբերին) նա Քրիստիանիայի համալսարանում հանդես է եկել հեռու «Փոքր ազգերի իրավունքների մասին» դասախոսությամբ, նշավակել մեծ տերությունների եսասիրական քաղաքականությունը: Մարդասիրական ոգին ու գթասրտությունը այնուհետև շատ անգամ կտրելու էին Նանսենին իր սիրելի գիտական զբաղմունքից՝ հանուն երկրագործի այս կամ այն հատվածում մարդու գազանություններից կամ տարերային աղետից տուժած ժողովուրդների:

Նանսենը վաղ է ծանոթացել հայ ժողովրդի պատմական անցյալին, աշխատել է իր նպաստը բերել Հայոց հարցի լուծման որոնումներին, 1925 թ. եկել է Հայաստան, տեղական իշխանությունների հետ քննարկել, բանակցել հայ գաղթականության հայրենադարձության և դրան առնչվող տնտեսական խնդիրների վերաբերյալ և գրել Հայաստանին ու հայ ժողովրդին նվիրված լավագույն գրքերից մեկը, որի նորվեգերեն հրատարակությունը խորագրված է «Հայաստանով», սնվելով ու ֆրանսերեն թարգմանությունները՝ «Հայաստանը և Մերձավոր Արևելքի երկրները», իսկ գերմաներենը՝ «Խաբված ժողովուրդ»:

Եվ այսօր, երբ համաշխարհային հանրությունը նշում է մեծ մարդասեր, օվկիանոսագետ, կենսաբան և ճանապարհորդ Ֆրիտյոֆ Նանսենի ծննդյան 195-ամյակը, այդ հորելյանը հայ ժողովուրդը կարող է ինչ-որ չափով իրենը համարել:

Է. Ա. ՄԱԿԱՐԹԱՆ

Դեղի ԱՐՓԱԶԱՅ ԵՎ ԼԵՆԻՆԱԿԱՆ

Երեկոյան ժամը 10-ին մեզ հատկացված հատուկ վագոնով՝ մեկնեցինք և հաջորդ առավոտ (ուրբաթ, հունիսի 20) ժամը չորսի մոտ հասանք Սարդարապատի դաշտի վերջին՝ Ալազյազ կայարանը: Մեզ հետ գնացքում էին նաև բանակի ձիեր ու զինվորներ: Մեզ ձիով ընդառաջ էր եկել Արազի կամրջի զինվորական պահակախմբի պարետը, ուր եղել էինք երկու օր առաջ: Այս ամենը թողնում էր հարձակումներից մեզ պաշտպանելու անհրաժեշտության տպավորություն: Իրոք, եղել են դեպքեր, երբ թուրքական կողմից քրդերը ավազակախմբերով անցել են այս կողմ՝ անասուն գողանալու: Վերջին անգամ դա պատահել է այս գարնանը: Ներկա դրությամբ նմանօրինակ վտանգի որևէ նշան չկար, մեզ կողոպտել չէր պատրաստվում ոչ ոք:

Առավոտ վաղ արդեն պատրաստ էինք մեկնելու: Մնում էր թամբած ձիերից ընտրել մի լավ կենդանի՝ հարմար թամբով: Աշխույժ ձիեր էին, հեծնելն այնքան էլ դյուրին չէր, և մերոնցից մի քանիսը դաշտում մի լավ պարելուց հետո միայն կարողացան հաղթահարել ու նստել թամբին: Զինվորական մի ջոկատի ուղեկցությամբ ու պաշտպանությամբ մենք ձիերով ճանապարհ ընկանք դեպի արևմուտք. անցնելով ընդարձակ, անհարթ տարածության մի ուղղվեցինք դեպի Արփաշայ, որի մյուս ափին՝ հեռվում, բարձրանում էին լեռնաշղթայի հրաբխային գագաթներ: Այլքաձև սարահարթն այստեղ ուներ հրաբխային, քարքարոտ հող, որ ծածկված էր հողմնահարված, մուգ շերտով: Բուսականությունն աղքատիկ էր՝ կոշտ, կոպիտ խոտաբույսերի մի քանի գորշ, չոր խուրձիք և ցաթուցրիվ աճած ուղտափշի թփեր: Սակայն, եթե հնարավոր լինի ջուր հասցնել այստեղ, ապա այն կվերածվի գեղեցիկ այգիներով հրաշալի հողատարածության:

Կարծրացած բնահողը նպաստավոր էր ձիավարելու համար, և ձիերը վազում էին քառատրոփ: Նրանք համեմատաբար փոքր կենդանիներ էին, ոչ շատ մեծ, քան պոլո-պոնիները: Մեծ մասը բավականին նիհարավուն ու ոսկրոտ էր, սակայն տոկոսն ու ժիր՝ հեծնելուն հարմար կազմվածքով: Ի դեպ, նրանք էժան, էլ չէին: Այսպիսի մի լավ ձիս արժեքը 200—300 ուրլի: Սահ-

մանապահ պարետի ձին ամրակազմ ու գեղեցիկ հովատակ էր, որն արժեք 2000 ուուրլի: Առավոտյան նա ձիով պահակակետից մինչև կայարան եկել էր 40 կմ և դեռ ճաշից հետո էլ, երբ բաժանվեցինք, ուզում էր վերադառնալ:

Հասանք գետին: Այն այստեղ սեղմված էր մոտ 500 մ լայնություներ և 60 մ խորություներ ունեցող մի նեղ կիրճում, որ փորել էր լավայի ու բազալտի շերտերի մեջ: Մենք կանգնած էինք կիրճի ամենանեղ հատվածում, իսկ մեզնից վեր, զառիթափ բարձրությունների միջև, գետի հունը լայնանալով վերածվում էր ընդարձակ հովտի: Ըստ մշակված նախագծի՝ այստեղ կիրճի լայնությամբ կառուցվելու էր 53 մ բարձրության մի ամբարտակ, որը վերևում փոկած հովիտը վերածելու էր մեծ լճի, վերջինս էլ ծառայելու էր որպես ջրամբար: Այնուհետև ջուրն այստեղից ջրանցքով Սարդարապատի դաշտ հասցնելու համար անհրաժեշտ էր լեռան միջով թունել փորել, որի սկիզբը լինելու էր ամբարտակի վերին եզրից մոտ 20 մ ցած: Թունելի երկարությունը կազմելու էր 2 կմ:

Նախագիծը, ըստ հմուտ փորձագետ Դափյուսի, հիմնականում իրագործելի էր, սակայն բարդությունը բարեհաջող ավարտին հասցնելն էր, քանի որ նախ 50 մ բարձրություն ունեցող ամբարտակի կառուցումն ինքնին արդեն մեծ ծախսեր պահանջող ձեռնարկ է, երկրորդ, կիրճի երկու կողմերի ապարը՝ բազալտի ու լավայի շերտերը, ճաքճաք ու ծակոտկեն է, և մեծ աշխատանք է պահանջվում, որպեսզի այն դիմանա նաև ջրի բարձր ճնշմանը: Զրի այդքան մեծ ծավալի կուտակումը կարող է ճակատագրական լինել ամբարտակի համար, եթե այն ճեղքվածք ստանա կամ պայթեցվի (լինի դա մարդու կողմից պատերազմի ժամանակ կամ երկրաշարժից), ապա ջուրը ցած կհոսի, և ջրամբարը կդատարկվի: Այդ բոլորից հետո ջրամբարի վերականգնումը, որպեսզի ջուրը կրկին թունելի բարձրության հասնի, տարիներ կտևի: Իսկ մինչ այդ Սարդարապատի դաշտի ողջ բնակչությունը կընկնի սոսկալի նեղ վիճակի մեջ, և նա այլընտրանք չի ունենա, քան հեռանալ կամ ոչնչանալ:

Դափյուսի կարծիքով առավել նպատակահարմար է գնալ գետն ի վեր և փնտրել ջրանցքի համար անհրաժեշտ բարձրություն, կառուցել այնտեղ ավելի փոքր, մոտ 10 մ բարձրության ամբարտակ, որի վերականգնելը, որն է պատահարի դեպքում, ավելի հեշտ կլինի: Այնտեղից էլ հնարավոր էր լեռան միջով թունել փորել դեպի հարթավայր: Թունելն ինչքան էլ որ երկար լինի, 4 կմ չի անցնի: Այսքանով հանդերձ, ամբողջ կառույցն ավելի քիչ ծախս կբազանջի, քան ձեռքի տակ եղած նախագիծը՝ իր բարձր ամբարտակով:

Այս կերպ, իհարկե, կունենանք ոչ այնքան մեծ մի ջրամբար, ուր կկուտակվեն ոռոգմանը շծառայող ձմռան ու գարնան ջրերը՝ ամռան շոր եղանակին օգտագործելու համար, երբ Արփաշայն ինքը բավականին սակավաջուր է դառնում: Դափյուսը գտնում էր նաև, որ եթե անհրաժեշտ է ջրահավաք ջրամբարներ կառուցել, ապա դրանք պետք է լինեն պատվարից վեր, նրանից անկախ, որպեսզի ամբարտակի վնասվածքի դեպքում ջրի ամբողջ ծավալն անմիջապես ջրանցքով շարտահոսի:

Այս առաջարկները լիովին հավանության արժանացան մեր հանձնախմբի մյուս անդամների կողմից, հայ ինժեներները նույնպես ընդունեցին, որ ծրագիրն ունի դրական շատ կողմեր:

Վերադարձը մասամբ վերածվեց ձիարշավի: Զիբը տուն էին շտապում, և մենք հազիվ էինք կարողանում զսպել նրանց: Հատկապես Կարլի ձին, նրան սանձահարել այլևս անհնար էր, նա քառատրոփ սլանում էր իր հեծյալի հետ, մինչև որ անհետացավ մեր տեսողատից: Մանր քար ընկավ սրտնեղիցս, երբ կայարանում Կարլին տեսանք ողջ և առողջ, նա կարողացել էր ձին կանգնեցնել միայն այստեղ:

Մեզ հետ էր նաև Թիֆլիսից և Մցխեթից մեզ հետ եկած լրագրողը՝ մեր բարեհամբույր ու գիրուկ բարեկամը: Ցավոք, ձիարշավը նրան շատ տհաճութուններ էր պատճառել, որից հետո նա հիվանդ պառկեց, և մենք այլևս չհանդիպեցինք:

Ինչպես արդեն ասել ենք, Ալազյազ կայարանը գտնվում էր Սարգարա պատի դաշտի բարձրադիր մասում: Կայարանից փոքր-ինչ արևելք սկսվում են Ալազյազի փեշերը, սակայն հսկա հրաբուխն այստեղ ծածկված է իրենից առաջ ձգվող բլրաշարքերով, որոնց կոնածակ զսոգածները նման են հրաբխային հին խառնարաններին: Հողն այստեղ անջուր է: Զարմանալի է, որ ոչ միայն Ալազյազից, այլև նրանից առաջ ձգվող այս բարձունքներից ոչ մի առվակ սկիզբ չի առնում, կամ գետնից չի բխում որևէ աղբյուր: Երկաթուղային կայարանի ջուրը խողովակաշարով բերված է հյուսիսից, որի համար մեծ ծախս է պահանջվել: Կայարանի մոտ կար քարե պարսպով շրջապատված մի փոքրիկ այգի, որտեղ եղած մի քանի ծառը ջրվում էր խողովակով բերված ջրով: Մնացած հողատարածքը կատարյալ մերկ էր:

Արփաշայից վերադառնալիս անցանք ավերակ տների մոտով: Անհնար է պատկերացնել, թե առանց ջրի մարդիկ ինչպես են ապրել այդտեղ: Արհեստական ոռոգման հետք չկա այս շրջանում: Հնում եղած մի քանի առվակներն էլ հետագայում փոխել են իրենց հունը: Առավել հավանական է, որ այստեղ բնակվել են անասնապահներ՝ տարվա այն եղանակներին, երբ տնդումներն առատ են լինում, և շրջակայքը վերածվում է հարուստ արոսավայրի:

Գիշերը գնացք նստեցինք՝ Լեռնական մեկնելու համար, իսկ մինչ այդ, կեսօրից հետո ընկած ամբողջ ժամանակն անցկացրինք կայաբանում: Պետությունն այստեղ մի ազարակ ունի, որ հաշվում է 500 կով և 1500 ոչխար: Կառավարիչի օգնականը ռուս էր՝ Դոնից, և կապիտան Քիսլինգը նրա հետ կարող էր ռուսերեն խոսել: Նա պատմեց, որ մտադիր են արտադրությունը մեծացնել՝ հասցնելով 5000 կովի և 15000 ոչխարի, դժվարությունն այն է լոկ, որ ջուր չկա: Առայժմ օգտագործում են կայարանի խողովակով բերված ջուրը, որ շատ թանկ է նստում:

Մեզ հարց էին տալիս, թե հնարավոր չէ՞ արտեզյան ջրհորներ փորել: Խելացի միտք է, եթե փոքր-ինչ խոր փորվի, ապա կարելի է հասնել քարի հաստ շերտին, որով հստում են Ալազյազի լանջերից սկիզբ առնող ջրերը: Սակայն բարդությունն այն է, որ ջուրը մինչև խիտ շերտերին հասնելը, որպեսզի հոսք կազմի, անցնելով այս ջրանցիկ լավայի ու տուֆի շերտերով, էլ ավելի խոր է ներծծվում: Սա է պատճառը, որ հրաբխային այս շրջանները հարուստ են հանքային աղբյուրներով, քանի որ ջուրը թափանցելով շատ խոր շերտեր, այնտեղ իր մեջ լուծում է հանքային բաղադրություններ:

Շագանակագույն հարթավայրին ու նրա հանդիպակաց լեռնայանջերին նայելով՝ ակամա մտածում ես, թե ինչպես կառնելի է այստեղ անասուն պահել, բավարար կեր հայթայթել նրա համար, որ կաթ առա: Սակայն հեռվում, սարերի վրա, մեզ երևացող բարձրությունների մյուս կողմում տնդումներն առատ են, և պետք է որ այնտեղ որոշ չափով խոտ լինի: Բայց զարմանալի է, որ անասնազոմբն այնտեղ չեն կառուցված, որպեսզի կովերը վեր ու վար շանեն այդ երկար ճանապարհը, որը հանգեցնում է կաթի զուր կորստի: Բանն այն է, որ այնտեղ, վերևում, ջուր՝ առվակ կամ աղբյուր չկա: Մնում է, որ անփոխարինելի այդ ջրի պատճառով նրանք այստեղ, ներքևում, թանկ խողովակաշարով բերված ջրի մոտ տեղավորվեն: Եթե դառնվի ջուր բերելու մեկ այլ ճանապարհ, ապա բոլորովին ինքնուրույնություններ կբացվեն:

Օրական 16—18 լիտր կաթ սովոր լավ կովն այստեղ արժե մի քանի հար-

յուր ուրիշ, 3--5 լիտր կաթ տվող սովորական կովը՝ 100—120 ուրլի (230—260 մարկ): Կթվորուհին ստանում է ամիսը 20 ուրլի, տղամարդ անասնապահը՝ 30 ուրլի՝ ինքնապարենավորման դեպքում:

Արտադրվում է շվեյցարական պանիր և մեկ այլ տեսակի հումեղ, յուղալի պանիր, որ հայտնի է Ալագյազի պանիր անունով: Ռուսական մեկ ֆունտ պանիրն արժե 35, իսկ կարագը՝ 75 կոպեկ, ուրեմն կիրգրամը մոտ 87 կոպեկ (1,90 մարկ) և 1,83 ուրլի (3,90 մարկ):

Ռուսը նախկինում Դոնի մարզում հարուստ գյուղացի է եղել, իսկ նրա ունեցած մեկ միլիոն ուրլիին՝ դժվարությամբ վաստակած փող: Սակայն նրանից խել են ամեն ինչ, և նա այժմ այստեղ պահում է այս ագարակը: Նրա կարծիքով հայերը ճիշտ պատկերացում չունեն այս վայրերի հնարավորությունների մասին: Նա պնդում էր, որ այս հարթավայրից և լեռնալանջերից շատ բան կարելի է ստանալ: Այժմ մտադիր են ագարակում մեծամասշտաբ խոզարուծություն կազմակերպել:

Երկաթգծի ուղղությամբ զբոսնում էին երկու ղեղեցիկ աղջիկ: Նրանք ունեին հայկական երկարավուն դեմք և բարձր, թեթևակի կոր քիթ: Քայլում էին ու ընթացքի մեջ ձեռքի պարզ իլիկով թել էին մահում՝ մի ձեռքով պահելով իլիկը, մյուսով պտտելով թելը: Այս շրջանում թել մսնելու տարածված եղանակ է սա, իսկ ճախարակ ոչ մի տեղ չտեսա: Կարելի էր հաճախ հանդիպել գյուղացի կանանց, որ ճանապարհով գնալիս՝ ժրաջան մանում էին ձեռքի այսպիսի իլիկներով: Նրանց շուրջը թռչկոտում էին երեխաներ, որոնցից շատերն էին գեղեցիկ: Նրանց աշխույժ, շարաճճի կերպարանքներին թըշվառության դրոշմ չկար:

Հարթավայրում, կայարանից հյուսիս, կային մի քանի քառակուսի հյուղեր՝ հարթ տանիքներով, ուր բնակվում էին անասնապահները: Դիտելով դեբանք՝ կարելի էր պատկերացում կազմել տեղի բնակչության ապրելակերպի մասին: Քարե շորս պատ և մերկ հատակ, ներսում մի կաթսայից բացի այլ կահկարասի չկար: Որպես վառելանյութ օգտագործում էին շորացրած գոմաղը, որ ձեռք էին բերում ագարակից: Մարդու բնակարանի ավելի պարզագույն ձև անհնար է պատկերացնել: Մյուսներից առանձնացված մի հյուղի առաջ կանգնած էր պայծառ սպիտակ հագուստով մի կին, հավանաբար դա նրա տոնական շքեղ զգեստն էր, որ հագել էր օտարերկրյա հյուրերի այցելության առիթով: Բայց թե ինչպես էր այդ ցածր, մութ անցքում ինչ-որ բան սպիտակ մնացել, ինձ համար հանելուկ մնաց:

Այդ ընթացքում երկինքը հետզհետե ծածկվում էր հյուսիսից եկած մրոռայլ ամպերով, որ գնալով դառնում էին մթամած ու սպառնալի, մինչդեռ հյուսիս-արևմուտքում և արևմուտքում երկինքը ողողված էր մայր մտնող արևի ցոլքերով: Հանկարծ սևակնած ամպերի մեջ շլացուցիչ լույսով փայլատակեց մի կայծակ, որոտաց շանթը, ապա հետևեցին նորերը, իսկ ավելի մոտիկ ճայթեց որոտը: Երևում էր հյուսիսում, սարերի վրա, տեղատարափ անձրև էր գալիս: Մեզ մոտ էլ անձրև եկավ, սակայն բուն շէր մնացել նրանից, այնքան որ ճանապարհին գոլորշիացել էր: Կարճ ժամանակ անց ամեն ինչ խաղաղվեց, և երկինքը պարզվեց:

Կլիմայի առանձնահատկությունից է, որ ինչքան էլ անձրևաբեր ամառի երբ գալիս, հողը դարձյալ մնում է չոր: Շուտով ամպերը խմբվեցին Ալագյազի զառաթների շուրջ, հյուսիսում և հյուսիս-արևելքում քաշվեցին լեռների վրայից և հեռանալով դեպի հարավ ու հարավ-արևելք՝ նախ համաքվեցին Արարատի գագաթների շուրջը, ապա ցրվեցին հարթավայրով մեկ: Ամպերն այստեղ որքան էլ սպառնալից կուտակվում են, միևնույն է, անձրև հազվադեպ է հասնում ծարավ հողին:

Երեկոն արագ իջավ լեռների ու երկրի վրա: Ուշ գիշերին եկավ գնացքը, մեր վագոնը կցեցին նրան, և մենք շարժվեցինք դեպի Լենինական կամ Դյում-րի:

ՆՈՐ ԶՐԱՆՑՔ ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՄՈՏ

Ահա և եկավ կիրակին, 21-ը հունիսի՝ Շիրակի ջրանցքի բացման նշանավոր օրը: Զրանցքը ոռոգելու ու բերրի էր դարձնելու մոտ 8000 հեկտար նոր, անչրդի հողեր:

Առավոտյան, երբ դուրս նայեցինք գնացքի մեր կուպեի պատուհանից, կայարանը լեփ-լեցուն էր զինվորներով, որ եկել էին տոնակատարությանը մասնակցելու: Նախաճաշից անմիջապես հետո ավտոմեքենաներով մեկնեցինք: Անցելով Լենինականի փողոցներով՝ դուրս եկանք սարուհարթ և ուղղություն վերցրինք դեպի հյուսիս-արևմուտք՝ տեսնելու ջրանցքի թունելը, մինչև շուր բաց թողնելը: Մի իսկական ժողովրդական զբոսանք էր սա. բոլոր ճանապարհները լցված էին տղամարդկանց, կանանց ու տարբեր տարիքի պատանիների հետիոտն խմբերով, ուղևորներով ծանրաբեռնված տարբեր տեսակի կառքերով՝ եզներ կամ ձիեր լծված, զարդարված գույնզգույն ժպավեններով ու տարբեր գույնի դրոշներով, վառ գույնի զգեստներ հագած կանանցով, ձիավոր ու հետիոտն զինվորներով. բոլորը զվարթ ու տոնական տրամադրությամբ:

Մեզնից ձախ, ցածում, Արփաշայի հովիտն էր: Այնտեղ պահպանվել էին անցյալի մարդկային քաղաքակրթության հետքեր՝ մի ամբողջ քաղաքի ավերակներ, մի վանք ու կլոր գմբեթով մի եկեղեցի: Բոլորը լքված, պատերազմներից ավերված, իսկ վերականգնման, ոչ մի փորձ: Լենինականն ինքը դեռ լիքն է թուրքերի վերջին արշավանքից մնացած ավերակներով: Շատ բան, իհարկե, արդեն վերականգնվում է: Սակայն պետք է առավել մտածել ներկայի ու ապագայի մասին, անցյալը թող մոռացվի:

Ինչքան մոտենում էինք, այնքան ստվարանում էին զբոսնողների խումբերը: Սրանից բացի, մեկ անգամ էլ եմ տեսել մարդկային զանգվածների նման հոծ բազմություն: Դա 1922 թ. Քրակիայում էր, երբ հուլյներն ու հայերը թուրքերի ահից թողեցին իրենց տներն ու փախան: Այսօր սակայն վախը չէր, որ իշխում էր, այլ ժպտացող կյանքն ու տոնական տրամադրությունը:

Մենք հասանք թունելի վերջնամասում ծվարած փոքրիկ մի գյուղի, ուր կառուցված էր մի մեծ հողթական կամար, որ երփներանգ գույներով սլաշծառ փայլում էր կապույտ երկնքում: Մարդկային բազմությունն այստեղ հիշեցնում էր Դերբիի օրն Անգլիայում, երբ մարդիկ լեփ-լեցուն կառքերով պիկնիկի էին գնում դեպի բլուրները, մի տարբերությամբ, որ կառքերին այստեղ մեծ մասամբ լծված են եզներ:

Ինչ-որ մեկն ընթացքի պահին թռավ մեր ավտոմեքենայի ոտնատեղին: Նա ճանապարհն էր ցույց տալու: Խաչված մուրճով գլխարկից կռահեցի, որ ուս ինժեներ է: Նայեցի նրան: Դեմքը ծանոթ էր: Նա ժպտաց, այո, իհարկե, 12 տարի առաջ ենք հանդիպել և միասին ճանապարհորդել Արևելյան Միբրիի ամայի տարածություններով և Ամուրի մարզով: Նա այն ժամանակ Ամուրի երկաթուղու շինարարությունում բաժնի պետ էր: Նրա աղգանունը Յակիմով էր, այստեղ ջրանցքի ու թունելի շինարարության երկրորդ ինժեներն էր:

Ճիշտ են ասում, որ աշխարհը փոքր է: Առավոտյան կայարանում ինձ ողջունեց մեկ այլ ինժեներ, նրան էլ շճանաչեցի: Հետո իմացա, որ նա էլ է այն ժամանակ աշխատել Ամուրի երկաթգծի շինարարությունում: Յակիմովի

Հրահանգներով վարորդը մեքենան վարում էր մարդկային բազմության միջով՝ մասամբ հանապարհով, մասամբ էլ դաշտով՝ անցնելով բավականին խոր փոսերի ու խորդուրորդ թմբերի վրայով: Վերջապես կանգ առանք ձորագլխին, որից ցած, խորքում, հոսում էր Արփաշայր: Ուղղահայաց ժայռերի կողքով, մի դժվարանցանելի ճանապարհով իջանք ձորը, ուր կառուցված էր ամբարտակը:

Անմոռաց տեսարան էր՝ մարդկանց բազմությամբ լեցուն վայր ու խոր ձոր, որի երկու կողմերում ուղղահայաց ժայռեղ էին: Ուր էլ որ նայում էիր, միայն քար էր: Ցածում փրփրում էր գետը, իսկ կիրճի ժայռապատերից վեր փայլում էր կապույտ երկինքը: Մի պատկեր Divina Commedia-ից («Աստվածային կատակերգությունից» — թ.): Մարդկանց բազմության միջով ճանապարհ բանալով՝ անցանք ջրարգելակի մոտով, որը դեռ բաց էր, և գետը ազատ հոսում էր, ապա կախովի կամրջով մարդկանց հոծ խմբերի հետ դուրս եկանք մյուս ափ: Ափով ցած իջնելով՝ կրկին անցանք գետը և կանգնեցինք թունելի մուտքի առջև:

Ինժեներն առաջ անցավ, մենք հետևեցինք նրան և շուտով սուզվեցինք անհայտ խավարի մեջ: Անվերջանալի երկար թվացին մեր թափառումները մթության մեջ, որ լուսավորվում էր իրարից բավականին հեռու տեղադրված մի քանի էլեկտրական լամպերի խղճուկ լույսով: Թունելի բարձրությունն այնքան էր, որ ես կարողանում էի ուղիղ քայլել, իսկ լայնությունը՝ երկու ձեռքերս տարածած չէին հասնում աչ և ձախ պատերին: Մի խումբ, որի մեծ մասը պատանիներ էին, քառատրոփ այնպես էր սլանում թունելով, որ ցեխ ու ջուր էր թոցնում շուրջը, իսկ գոտոցներն ու ճիշերը մի ահավոր աղմուկ էին առաջացրել: Ինչքան որ կարողացա զանազանել լամպերի աղոտ լույսով բազմության մեջ կային նաև կանայք ու աղջիկներ: Ակամա մտածեցի, եթե հանկարծ ջուրը բաց թողնեն, կամ որևէ խուճապ առաջանա, ի՞նչ կկատարվի այստեղ: Կյանքի համար խելացնոր պայքարի հորձանուտն այս նեղ փողոակում կճգմի առաջ մղվող մարդկային զանգվածները:

Թունելի սկզբնամասում գետինը դեռ չոր էր, առաջ գնալով հանդիպեցինք փոքրիկ ջրափոսերի, որոնք հետզհետե մեծանալով՝ թունելի անցարանում կազմում էին իրար կապակցված ջրային ցանց: Երկու կողմում պատերի մոտ կային քարեր կամ փոքրիկ թմբեր, որտեղով կարելի էր առանց թըրջվելու քայլել: Սա զրոսանք էր ջրի մեջ, իսկ թունելի երկարությունը 2,5 կմ էր:

Սկզբում իմ առջևում դեռ տեսնում էի ինժեների և մեր ուղեկիցների սպիտակ գլխարկները, քայլ առ քայլ սակայն նրանք անհետացան հրմշտոցի մեջ, և ես մնացի մենակ: Մինչ սայթաքելով առաջ էի շարժվում, խոր ջրափոսերից խուսափելով՝ սեղմվում պատերին, նկատեցի ալեխառն մորուքով, խելացի դիմագծերով, տարեց մի պարոնի: Նա արագաքայլ գնում էր ամբոխի հետ, հաճախ ենթարկվելով հանդուզն պատանիների հրմշտոցին, որ ստեպստեպ վազքով գալիս էին թունելի մեջտեղով, ուր ջուրն ամենաշատն էր, կեղտոտ ջրերը թոցնելով մինչև իրենց ականջնորը: Ես տեսա, թե ինչպես պարոնը մի քանի անգամ դիմեց նրանց, հավանաբար լզուլացնում էր, որ մի քիչ ուշադիր լինեն, և այդ բոլորը նա անում էր սիրալի ներողամտությամբ ու համբերությամբ:

Մենք հանդիպեցինք զինվորների մի ջոկատի, որ գնում էր հակառակ ուղղությամբ: Նրանք ոչ պակաս անուշադիր էին, քան պատանիները, սակայն դա բնորոշ է զինվորականին ընդհանրապես, լինի դա ներկայիս «կարմիր», թե անցյալի «սպիտակ» բանակայինը: Իսկ մենք՝ առանց համազգես-

տի սովորական մահկանացուներս, ո՛րեքորդ անգամ արդեն թաղվում ենք խոր ջրափոսերը՝ նրանց թողնելով ճանապարհի շոր եզրերը:

Վերջապես առջևում սկսեց բնորոշվել ու լուսավորվել, և մենք հայտնրվեցինք ցերեկվա լույսի մեջ: Այստեղ գտա կապիտան Քիսլինգին ու գյուղատնտեսության կոմիսար Երզնկյանին: Այստեղ էր նաև թունելում հանդիպած սպիտակամորուս, տարեց պարոնը: Երզնկյանը ներկայացրեց նրան, նա Վրաստանի Հանրապետության նախագահն էր:

Քիչ անց հկավ նաև Դափյուսը: Նա չէր հասցրել անցնել թունելով. ներքևում ճանապարհի մի կարճ հատվածից արդեն հոգնել էր: Իսկ Կարլին և Լո Սավիոյին առավոտվանից այլևս չհանդիպեցինք:

Բարձրացանք սարահարթ, ուր ավտոմեքենաները մեզ էին սպասում, և վերադարձանք այնտեղ, ուր սմբարտակն էր ձորի մեջ: Սարայանջով ցած իջնելով՝ նորից անցանք կախովի կամրջով և ուղղվեցինք բարձր փայտամածով հետորական բեմը, որ կառուցված էր գետի մյուս ափին, զառիթափ, քարքարոտ լեռնալանջի վրա: Մեզ ողջունեց հանրապետության նախագահ Սաքո Համբարձումյանը, որ բժիշկ էր մասնագիտությամբ: Նա նոր էր ընտրվել, Երևանում Կառավարության հետ մեր բանակցությունների ընթացքում: Նախկին նախագահը՝ Լուկաշինը, այժմ Թիֆլիսում երեք հանրապետությունների դաշնակցային միասնական Կառավարությունում Հայաստանի ներկայացուցիչն էր:

Գետի երկու կողմի սարայանջերին ժողովրդի հոծ բազմություն էր հավաքված: Թվում էր՝ փոքրիկ մրջյուններ են սողում ու վխտում զառիթափ սարայանջերի ստորոտների մեծ-մեծ քարերի արանքում:

Տղամարդկանց մեծ մասը, սովորականի պես, կրում էր եվրոպական հագուստ, մոխրագույն, փափուկ կտորից կարված բուլճարկյան գլխարկներ, մի մասը սպիտակ վերնաշապիկներով էին, որ, ի պատիվ օրվա, շողում էին մաքրությունից: Բազմության մեջ երևում էին նաև ինժեներների սպիտակ գլխարկներ: Երբեմն-երբեմն աչքի էր ընկնում մի թուրդ կամ թաթար՝ մուգ դեմքով և իր անխուսափելի գառան մորթուց գլխարկով: Չկար միայն հայկական ժողովրդական տարազը, այն իսպառ անհետացել էր: Առկա էին դեմքերի ամենատարբեր տիպեր, մեծ մասը սակայն բարձր, կարճագանգ երկարավուն դեմքերն էին՝ հարթ այտուկներով, բարձրաթամբ, կեռ քթերով և լայն, փոքր-ինչ հետ ընկած ճակատով: Այս ֆոնի վրա երբեմն երևացող լայն դեմքերն օտարոտի տպավորություն էին թողնում: Քիչ բացառությամբ բոլորը հարթ սափրված էին կամ վերին շրթունքի վերևում, քթի տակ, ունեին կարճ, սև մազեր, ոմանք էլ՝ կարճ մորուքներ: Տարեց տղամարդկանցից քրչերն ունեին ալեհեր բեղ-մորուք:

Նկատելի էր, որ ընդհանուր առմամբ թե տղամարդկանց և թե կանանց մեծ մասը երիտասարդ էին, ծերերի հազվադեպ կարելի էր հանդիպել:

Տիկնայթ՝ իրենց վառ գույնի հագուստներով ու գլխարկներով, կենդանություն էին տալիս միօրինակ, զանգվածային այս հավաքին, երևում էին նաև վառ կարմիր հովանոցներ: Կանացի գլուխները նույնպես գեղեցիկ էին՝ սև մազերով, երկարավուն, ձվաձև դեմքերով, փոքր քթերով ու նուրբ դիմագծերով, մեկումեջ աչքի էր ընկնում նաև վայրի տիպը՝ սև, զանգուր մազերով, կոպիտ դիմագծերով, ցցուն այտուկներով ու ծնոտով, արծվաքթով, սև, վառվռուն աչքերով:

Ժամը 11-ն էր, ըստ հայտագրի ջուրը թունել էր բաց թողնվելու ժամը 12-ին: Սա մի քիչ շատ էր այստեղ արևի տակ կանգնած սպասելու համար, սակայն չէ՞ որ համբերությունը հենց Արևելքի առաքինությունն է:

Վերջապես ամբարտակում և թունելում իջեցվեցին ջրարգելակի թևերն

ու փակվեցին: Զուրն ամբարտակի մյուս կողմում սկսեց անմիջապես բարձրանալ, և գետի ցածրադիր ափին կանգնածները ստիպված շտապեցին ետ քաշվել, քանի որ ջուրը լցվելով փոսորակները՝ առաջացնում էր կղզիներ: Վերջիններս ևս կամաց-կամաց անհետացան բարձրացող ջրի տակ: Ամբարտակից վեր գոյացավ մի մեծ լիճ, որ շարունակում էր դեռ բարձրանալ:

Հանկարծ կողքի ուղղաբերձ ժայռից ծանր շրմփոցով ջուրը նետվեցին մի քանի մերկ մարմիններ: Երիտասարդներ էին, որ խայտալով լողում էին նոր լճում: Նրանք լողում էին ձեռքերն իրենցից առաջ փոխնիփոխ տարածելով ջրի վրա, այնինչ լողալիս պետք է ձեռքերն ու ոտքերը համաշափ շարժել, ինչպես ընդունված է մեզանում: Շուտով նրանց հետևեցին և ուրիշները, ջրի ցալթունների ու մարդկանց քրքիջների ուղեկցությամբ անընդհատ թրմփոցներ էին լսվում: Առաջինները հագներին լողազգեստ ունեին, հետո արդեն այդ հանգամանքը դուրս մնաց ուշադրությունից: Զուրը շարունակում էր բարձրանալ, մինչև որ ամբարտակի վերին եզրից ջրվեժի տեսքով ցած թափվեց: Լողորդներից շատերն անցան պատենշի մյուս կողմը, նստեցին և սկսեցին արևահարվել Ադամի իրենց զգեստներով: Նրանց մեծ մասը նիհարավուն էր, սակայն ամուր և դեղեցիկ կազմվածքով:

Ժամանակն էր սկսելու բացման արարողությունը: Հանրապետության նախագահը, գյուղատնտեսության կոմիսարը և մի քանի այլ անձիք, այդ թվում և Զեռուն՝ «Near East Relief»-ից («Մերձավորարևելյան նպաստամատույց» — թ.) և ես անցանք կախովի կամրջով և գնացինք դեպի թունելի մուտքի ջրարգելակը:

Մի շարժումով նախագահը, մի քանի հոգու հետ բռնելով սարքի թափանիվը, սկսեց պտտելով բարձրացնել ջրարգելակի ծանր թևերը: Զորում փոթորկալից ցնժուկություն էր: Նրանք պտտում ու պտտում էին ամբողջ ուժով, հրավառության կրակոցները թնդացնում էին բարձրաբերձ ժայռերը, ծածանվում էին դրոշները, մարդիկ ուռա էին գոռում, իսկ ցածում ջուրն ավելի ու ավելի մեծ հոսքով էր մղվում դեպի թունել: Ըս իմ բարեկամ գյուղատնտեսության կոմիսարի, Զեռուն էլ մյուս հեղինակավոր անձանց հետ պտտեցինք թափանիվը հավաքվածների ծափողչույնների ներքո: Ցածում բացվածքը, աստիճանաբար մեծանալով, հնարավորություն տվեց ջրի ազատ հոսքին: Կարելի էր արդեն պատկերացնել, թե սարահարթում ինչպես էր ջրանցքն աստիճանաբար լցվում, որ ոռոգելով ծարավ հողը՝ կյանք էր պարգևելու նրան:

Մենք վերադարձանք մեր տեղը՝ բեմահարթակ: Ելույթ ունեցավ Հայաստանի նախագահը, նրան հաջորդեցին շատերը, ինձ էլ հերթ հասավ, Վրաստանի նախագահին նույնպես, որ փոխանցեց հարևան հանրապետության ողջույններն ու բարեմաղթությունները: Իսկապես մեծ օր էր, ավարտին էր հասցրվել մի կառույց, որը հնարավորություն էր ստեղծելու երջանիկ ընտանիքների համար կառուցել նոր բնակարաններ:

Բացման հանդիսավոր արարողությունն ավարտվեց: Զրոսանքի ելած բազմությունը շրջվեց հակառակ ուղղությամբ: Մենք նույնպես մեկնեցինք ավտոմեքենաներով և ընթանալով ջրանցքի երկարությամբ դեպի ցած՝ տեսանք, որ այնտեղ արդեն ջուրը հոսում է բավական արագությամբ: Այդ տեսարանն ամենուրեք հրճվանք էր պատճառում մարդկանց: Տղամարդիկ ու պատանիները լողում էին, իսկ կանայք՝ ափին նստած, ոտքերն էին դրել ջրի մեջ: Զրանցքից խողովակաշարով ջուր պետք է տարվեր Արփաշայի հովիտ՝ այնտեղ մի նոր էլեկտրակայան աշխատեցնելու համար: Այսօր հանրապետության նախագահը դնելու էր էլեկտրակայանի հիմքերը:

Ամբարտակի, թունելի և ջրանցքի հետ կապված բոլոր աշխատանքները լավ տպավորություն էին թողել, փորձագետ Դափյուսը ևս ետ չէր մնում իր

գնահատականների մեջ: Նա դրանք որակեց որպես լավ մտահղացում, խելացի նախագիծ և խնամքով գլուխ բերված կառույց: Ամեն ինչից երևում էր, որ արհեստական ոռոգման կուլտուրան այստեղ անցյալ է ունեցել: Գործն արված է զարմանալի իննալողութչամբ: Ամբողջ կառույցի վրա ծախսվել է մոտ կես միլիոն աշխատանքային օր՝ երեք հերթով, և 1300000 ուրլի (մոտ 2800000 մարկ): Ինչպես նշել ենք, թունելի երկարությունը 2,5 կմ է, և նրա միայն 1 կմ արժեքը կաղմել է 300000 ուրլի (645000 մարկ):

Հուզիչ էր, երբ տունդարձի Տանապարհին ժողովրդին տեսանք այդպիսի տունական տրամադրության մեջ: Մարդիկ խմբերով նստած գետնին՝ չոր խոտերով կամ նման մի բանով կրակ էին վառել ու եփում էին իրենց կերակուրը: Ամենուր ստն էր ու ցնծություն, սակայն զուսպ ու խաղաղ, առանց անկարգությունների:

Տղամարդկանց մի մեծ խումբ հավաքվել էր պարիապզուկով ու թմբուկով երկու երաժշտի շուրջ: Շրջանի ներսում խրոխտ շարժումներով պարում էին թե մենակ և թե շուրջպարով՝ իրար ձեռք բռնած:

Վերադարձանք քաղաք, և Նապոլեոնն ուղեկցեց մեզ ռեստորան՝ ճաշի: Մուտքի մոտ հավաքված պատանիները կոշիկ մաքրելու իրենց ծառայությունն էին առաջարկում: Նրանք այստեղ շատ էին, սակայն չթափուրությունը չէր նրանց ուղեկիցը, այլ լավ տրամադրությունն ու զվարճախոսությունը: Թունելով անցնելուց և այնտեղ ջրի մեջ թաթախվելուց հետո նրանց ծառայությունը ճիշտ տեղին էր: Արևն էլ արդեն հասցրել էր շորացնել կոշիկները:

Մենք իջանք զով, մաքուր, հրաշալի մի նկուղ, ուր և՛ ճաշը, և՛ գինին, և՛ երաժշտությունը գերազանց էին: Երաժիշտների խումբը բաղկացած էր երկու ջութակից, որ նվագում էին մի տղամարդ և մի կին՝ գեղեցիկ, բարձր սանրվածքով, մի ֆլեյտայից, և մի տղամարդ էլ նստած էր դաշնամուրի առաջ: Սկզբում նվագեցին հայկական երաժշտություն, ինչպես արդեն ասել ենք, միօրինակ, կայտառ պարային մի ութմ: Ապա հնչեցին ռուսական լայնատարած, սահուն մեղեդիներ: Ուր իշխում է ընդարձակ տափաստանների անդորրը՝ հագեցված խոր թախիծով, որը համբերատար, մերժված ժողովրդի ոգու արտահայտությունն է: Ահա և Ստենկա Ռազինի (ուկրաինացի հրոսակապետ և Մերձվոլգյան գյուղացիության առաջնորդ, որ այժմ Ռուսաստանում դարձել է սիրված ժողովրդական հերոս) գեղեցիկ երգը: Այնուհետև հնչեցին քրդական, պարսկական և թուրքական (թաթարական) եղանակներ: Իրանք գեղեցիկ էին և ավելի քաղցրալուր քան հայկականը: Այդ բոլորի մեջ առավել դուրեկան քրդական մի մեղեդի կար Արարատի շրջանից: Մեզ հավաստիացնում էին, որ քրդական ու թուրքական երգերն էլ հայկական ժագում ունեն:

Ես ապշեցի, երբ հայերն սկսեցին նվագել իրենց անողոք թշնամիների երաժշտությունը, սակայն անկեղծ ծափահարությունները վկայությունն էին այն բանի, որ դրանք այստեղ լսվում են հաճույքով: Ինձ ասացին, որ խորհրդային կարգեր հաստատվելուց հետո այլևս վերացել է ատելությունը ժողովուրդների միջև: «Այժմ մենք բոլորս եղբայրներ ենք», — ասում էին նրանք, բայց որ դա գալիս էր սրտի խորքից, կասկածելի էր: Երեխաները, օրինակ, սիրում են թատրոն խաղալ և դա անում են մեծ արվեստով: Նրանց խաղացած նյութի հիմնական խնդիրը թուրք սպանելն էր:

Նկատելի էր նաև, որ մարդկային հարաբերություններն այստեղ զարգանում են դեմոկրատական ճանապարհով: Մեզնից ոչ հեռու նստած էին երիտասարդներ, նրանցից մեկը քարտուղար էր ժողովրդական կոմիսարիատում, այսինքն՝ բարձր պաշտոնյա, սակայն նույն սեղանին նստած էր նաև նրա վարորդը, որն, ի դեպ, շրջապատում միակն էր՝ զխարկը զլխին նստած: Նրա

շարժուձևը նույնպես առանձնապես «բարձրաշխարհիկ» չէր, սակայն նա բարձրաձայն մասնակցում էր դրույցին և համարձակ կարծիք հայտնում:

Մեր կողքին, մի երկար սեղանի շուրջ, նստած էր երիտասարդների մի այլ խումբ՝ կիրթ տեսքով ու վարվեցողությամբ: Նրանցից մեկը բաժակը ձեռքին մոտեցնում մեր սեղանին և իր ընկերների անուշից ողջունելով մեզ՝ խմեց մեր բարի գալուստի կենացը: Ծս ևս պետք է գնայի ու բաժակ խփեի նրանց հետ: Նրանք իմ վրա լավ տպավորություն թողեցին:

Գնալով ավելի ու ավելի էի զարմանում, թե որքան տարբեր տեսակի դեմքեր կարելի էր հանդիպել այստեղ: Դրանց մեծագույն մասը բացառապես հայկական էր: Մնացածների մեջ կային նաև փոքր քթերով, բաց գույնի փոքր-ինչ ավելի լայն դեմքեր, որ ավելի շուտ հիշեցնում էին մեր, հյուսիսային տիպը: Առանձնանում էր նաև զուտ հոռմեական, կայսերական տիպը՝ գեր դեմքով ու լայն ծոծրակով:

Երկաթուղային մեր վագոնը գնալիս՝ կայարանի առաջ, քարե աստիճանին նստած մի մուրացկանի տեսա, որ հարմար տեղավորվել ու հանգիստ ննջում էր: Սա արդեն մի այլ աշխարհ էր: Նա, անշուշտ, միակն էր, որ այսօր չէր մասնակցել տոնին, և ես աշխատեցի շխանգարել նրա քունը:

Երեկոյան խորհուրդների մեծ ժողով էր, որ վարում էր նախագահը: Այն սկսվեց Լենինականի քաղաքային խորհրդի երիտասարդ նախագահի կամ քաղաքագլխի երկար ճառով, որը հավանաբար ներկայացնում էր ջրանցքի ողջ պատմությունը, գուցեև ամբողջ Հայաստանի: Իհարկե, ես ոչ մի բառ չհասկացա, սակայն նկատեցի, որ հայերենը այնքան էլ բարեհունչ չէ: Թերևս այն ուժեղ հնչողություն ունի, սակայն ավելի շատ թողնում է մի տեսակ կցկտուր տպավորություն, մանավանդ երբ համեմատում եմք սահուն ռուսերենի հետ: Բայց պետք է ասել, որ այստեղ, ինչպես և ամենուր, շատ բան կախված է հոստորից, լավ հոստորի բերանում ուզածդ լեզուն կարող է վերածվել երաժրշտության:

Ի վերջո քաղաքագլուխն ավարտեց իր ճառը և վարձատրվեց բուռն ծափահարությամբ: Նրանից հետո շատերը խոսեցին, այդ թվում և իմ նոր բարեկամը՝ Վրաստանի նախագահը, որն իր հաճելի արտաքինով ու խոհեմ զսպվածությամբ լավ տպավորություն էր թողնում: Ելույթ ունեցավ նաև Ադրբեյջանի նախագահը: Նա ազգությամբ թաթար էր ու մահմեդական: Սկզբում խոսեց ռուսերեն, ապա անցավ իր մայրենի լեզվին՝ թուրքերենին: Ակրհայտ էր, որ նա լավ խոսեց, քանի որ արժանացավ ջերմ ծափահարության: Դարձյալ մնում էի զարմացած, որ թուրքերն այստեղ այդչափ լավ են ընդունվում: Չէ որ նախկինում Ադրբեյջանի թաթարները նույնպես հայերի ոխակալ թշնամիներն էին, և դեռ շատ չի անցել այն ժամանակից, երբ նրանք Բաքվում կազմակերպեցին հայկական ջարդեր: Սակայն այժմ տիրում է եղբայրության, բարեկամության և խաղաղության մթնոլորտ:

Ծս շեմ կարող ներկայացնել ճառերից գոնե մի քանիսի բովանդակությունը, որի մեծ մասը, անշուշտ, լավ էին, որովհետև, ցավոք, ոչինչ չեմ հասկացել: Այնուհետև նախագահն ինձ էլ ձայն տվեց: Ծս խոսեցի գերմաներեն, իսկ երևանցի պրոֆեսորներից մեկը թարգմանեց: Ինչ պետք է ասեի ես այս ամենից հետո, եթե ոչ այն, ինչի մասին, անշուշտ, արդեն խոսել էին նախորդները նշանավոր այս օրվա մասին, որով նոր էջ էր բացվում հայ ժողովրդի տարեգրության մեջ, այն ընդարձակ հարթավայրի մասին, որ դարերի վեր ծարավ էր, իսկ այժմ խմելու ջուր ստանալուց հետո քայլ առ քայլ վերածվելու է բերրի դաշտերով ու այգիներով հրաշալի գորգի: Պետք է խոսեի նաև այն մասին, թե ինչ մեծ տոլուկություն թողեց ինձ վրա այն աշխատանքը, որը կատարվել է ջանասեր ու խելամիտ այս ժողովրդի կողմից:

Նա իր սուղ միջոցներով, սակայն նպատակասլաց կերպով, տառապանքների, պատերազմի գործած շարիքների ու ավերածությունների մի երկար ժամանակահատվածից հետո կառուցում է երջանիկ ապագա: Եվ վերջապես այն, ինչ տեսանք մենք, որ նա կարողացել է ստեղծել խաղաղ պայմաններում, համոզվեցինք, որ աշխատասեր ու նպատակասլաց այս ժողովուրդն ի վիճակի է արագ կերպով զարգացնել իր երկրի հնարավորությունները և բազմաթիվ նոր բնակավայրեր կառուցել հազարավոր երջանիկ ընտանիքների համար: Քաղաքակիրթ ողջ աշխարհի համակրանքն է վայելում Հայաստանի ձեռնհասությունը՝ ստեղծելու ազգային հայրենիք, թեկուզ և ոչ բոլոր հայերի համար, այնուամենայնիվ դա կլինի մի հայրենիք, որ իրենք կհամարի հեռվում գտնվող ամեն հայ:

Հավաքից անմիջապես հետո տեղի էր ունենալու համերգ: Մենք դուրս եկանք հենց այն պահին, երբ նախադահն ինձ նվիրված ճառ էր արտասանում, որի մասին ես տեղյակ չէի: Քանի որ այստեղ դեռ այն երջանիկ հարաբերություններն են, երբ ժամանակը կարևոր դեր չի խաղում, համերգը սկսվեց ծրագրով նախատեսվածից մի քանի ժամ անց: Սակայն երգն ու երաժշտությունն արժանի էին, որ այդչափ սպասեցինք: Մենք լսեցինք իտալական դպրոցն անցած մի հայ բարիտոնի, նաև այլ արվեստագետների:

Այնուհետև մեզ հրավիրեցին ընթրիքի: Սրահները զարդարված էին օրվա հանդիսության վայել, միջանցքներն ու աստիճանները պարուսինի օգուլությամբ փոխակերպվել էին առավոտյան մեր անցած թունելին, միայն այստեղ ավելի լուսավոր էր, և ջրի մեջ չէինք շփշփացնում: Այս շոր թունելով գնացինք ճաշասրահ: Այնտեղ տոնական սեղանների շուրջ խմբվել էին մարդիկ: Ես ծանոթացա ջրանցքի շինարարության գլխավոր ինժեների հետ և շնորհավորեցի նրան կառույցի բարեհաջող ավարտի կապակցությամբ: Նա արտաքնապես համակրելի ու բանիմաց մարդու տպավորություն թողեց: Խընջույթը՝ բազմաթիվ ճառերով ու զվարճախոսություններով, տեեց մինչև վաղ առավոտ:

Սրանով տոնն ավարտվեց մեզ համար: Քանի որ Հայաստան էինք եկել խոպան հողերի մշակման ու արհեստական ոռոգման հնարավորություններն ուսումնասիրելու նպատակով, ապա մեզ համար անսպասելի բարենպաստ առիթ էր, որ հնարավորություն ունեցանք մասնակցելու նոր ջրանցքի բացմանը և տեսնելու, թե այդ ասպարեզում ինչ մեծ գործ է արվել:

«ՄԵՐԶԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՒՅՑԻ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Այժմ արդեն արժեք տեսնել, թե «Մերձավորարևելյան նպաստամատույց» մեծերիկյան այս մեծ կազմակերպությունն ինչ էր արել Հայաստանում հազարավոր հայ որբերի դաստիարակման ու խոպան հողերի մշակման ուղղությամբ: Բարեգործական այս կազմակերպությունն իր բազմաթիվ մասնաճյուղերը ուներ Լեռնախաղաղի մոտակայքում: Այդ այսպես կոչված «համայնքները» զբաղեցնում էին մի քանի մեծ շենք, մասամբ ռուսական կայազորի նախկին զորանոցներն ու բարաքները, որ գտնվում էին քաղաքից դուրս, սահարաթում:

Առավոտյան (երկուշաբթի, հունիսի 22) պարոն Բիշի ուղեկցությամբ մեքենայներով մեկնեցինք Կազաչի-պոստ կայարանը, ուր մեզ տրամադրեցին մաքուր ու հարմարավետ սենյակ:

Առաջինն այցելեցինք հիվանդանոց, որ լավ կահավորված էր: Այնտեղ մենք ակամատեսն եղանք այն ամենի, ինչ արվում էր հիվանդ երեխաների,

նրանց մերձավորների համար, նաև՝ շատ-շատերի, որ հաճախ գալիս էին հեռվից՝ այստեղ օդնություն փնտրելու: Դռները հազվադեպ էին փակվում, ընդունում էին, քանի դեռ տեղ կար: Սենյակներն օդասուն էին ու մաքուր, հիվանդները պառկած էին մաքուր սպիտակեղենով, երկաթյա ամուր մահ-ճակատներին: Մեծ քանակությամբ զորանոց էր եղել: Մեզ ուղեկցում էին ամերիկացի երկու երիտասարդ հմուտ բժիշկ: Յուրաքանչյուրը մեզ տարավ իր բաժանմունքը, մեկը՝ վիրաբուժական, մյուսը՝ ներքին հիվանդությունների:

Անչափ հուզիչ էր տեսնել հիվանդների երախտագիտության արտահայտությունները բժիշկների հանդեպ, նրանք համբուրում էին բժիշկների ձեռքերը, մինչ վերջիններս զբաղված էին լինում նրանց հետ: Կատարախտի վիրահատություն տարած մի տղամարդ կար, որ երկար տարիներ զրկված էր տեսողությունից: Մի աչքն էլ կորցրել էր դժբախտ պատահարից: Այսօր վիրակապը հեռացնելու էին աչքից: Բոլորը լսրված էին: Վիրակապը քանդվեց, բժիշկը ձեռքը պահել էր նրա աչքի առջև: Այո՛, այո՛, նա տեսնում է, հիվանդը բունեց բժշկի ձեռքը և համբուրեց:

Մարդիկ տեսնելով բազմաթիվ այսպիսի հրաշալի վիրահատություններ, որոնցից առաջ վախենում էին, արդեն ցանկացած վիրահատություն կուրորեն վստահում էին բժշկին: Հետաքրքիր մի դեպքի ականատես եղանք: Ընկնավոր մի տղայի հիվանդության նոպաները այնքան հաճախակի էին դարձել, որ կրկնվում էին երկու ժամը մեկ: Նա դատապարտված էր մահվան: Զեռնարկելով վերջին հուսահատ փորձը՝ «բժիշկ դուկտոր էվլենսը ծակելով գանգոսկրը, անցք է բացում», տեղ շահելով՝ գանգի խոռոչում ճնշումը նվազեցնելու: Դրանից հետո տղան դեռ նոպա չէր ունեցել: Վիրահատությունից շատ ժամանակ չէր անցել, և հնարավոր չէ որոշակի ասել, թե միջամտությունն ինչ էլք կունենա, սակայն տղան առայժմ ազատված էր ցավերից, գոհ ու երջանիկ տեսք ուներ:

Հետմիջօրեին այցելեցինք «Հյուսիսային համայնք», ուր մեզ ջերմորեն ընդունեցին տոնական հագնված շորս հազար աղջիկներ: Նրանք կանգնած էին ըստ տարիքի, որը մի քանի տարվա տարբերություն էր: Հաճելի էր տեսնել այդ ուրախ ու ճառագայթող դեմքերը, դիտել, թե ինչպես էին աղջիկները խմբվել հաստատության տիրուհու՝ օրիորդ Մաք-Փեյի շուրջը և ինչ սիրով էին կապված նրա հետ: Մեզ ցույց տվեցին մեծ սրահները, ուր երկար շարքերով դրված էին երեխաների երկհարկանի մահճակալները: Ներկա եղանք փոքրիկների ճաշի, պարապմունքի և աշխատանքի ժամերին: Ամենուրեք մաքրություն էր, թարմ օդ և խիստ կարգապահություն:

Այնուհետև շենքի առաջ, ընդարձակ հրապարակում, տեղի ունեցավ մարմնամարզական վարժությունների ու տարբեր մրցախաղերի մեծ ցուցադրում: Ազատ հրապարակում ուսուցիչ կանգնած սպիտակազգեստ փոքրիկների բազմությունը գեղեցիկ տեսարան էր ներկայացնում: Ամեն ինչ կատարվում էր ճշտորեն, անշուշտ այստեղ շատ բան էր արված երեխաների ֆիզիկական զարգացման ու առողջության համար, ընդ որում ամենօրյա դպրոցական պարապմունքներով ապահովվում էր նաև նրանց մտավոր կրթությունը:

Երեկոյան ամերիկյան ակումբում տրվեց մեծ ճաշկերույթ, որին մասնակցում էին հիմնականում «Մերձավորարևելյան նպաստամատույցի» և նրա մասնաճյուղերի աշխատակիցները: Բացի ամերիկյան գաղութի պարոններից և տիկիներից, հրավիրված էին նաև ջրանցքի բացմանը մասնակցած բարձրաստիճան հայեր: Պարոն Բիլը հրաշալիորեն բացեց բազմաթիվ հոստոնների շուրջպարը: Նա համառոտ մի ակնարկով ներկայացրեց «Մերձավորարևելյան նպաստամատույցի» աշխատանքներն ու նպատակները: Ծս ևս ելույթ ունեցա և խոսեցի այն մասին, թե երկու ինչ հիշարժան օր ապրեցինք մե՛նք այստեղ:

Երեկ սկանաւոս եղանք այն արարողութեանը, թե ինչպես հազարամյակներ ծարավի հողը ջուր ստացավ, իսկ այսօր տեսանք, թե ինչ սիրասուն գորովանքով են շրջապատված հազարավոր մարդկային ծարավ, փոքրիկ, զգայուն հոգիներ, տեսանք մանկական հազարավոր ճառագայթող աչքեր:

Պատերազմի հասցրած վերքերից հետո մարդկայնութեան դրսևորման բնորոշ ձևերից են դրանք՝ աշխատանք՝ կենսամակարդակի բարձրացման համար, սեր՝ հավատի և հույսի ծլարձակման հանդեպ:

Հաջորդ օրը (երեքշաբթի, հունիսի 23) կեսօրից առաջ այցելեցինք «Մեր-ձավորարևելյան նպաստամատուցից» երրորդ բաժանմունքը՝ «Պոլիգոնի համայնք», ուր պատսպարված էին 3500 տղա ու 1500 աղջիկ: Այստեղ տղաները նախօրոք հարդարել էին փոքրիկ պարտեզներ ու պատրաստել ոտոզման՝ սպասելով ջրանցքի բացման մեծ օրվան: Յուրաքանչյուր պատանի իր փոքրիկ հողակտորում ջանասիրաբար տնկումներ էր արել ու ցանել: Սակայն իրականում նրանք քիչ էին հավատում, որ իրոք հնարավոր է՝ ջուրը, անցնելով այս շոր անապատով, հասնել իրենց:

Ահա եկել էր այդ մեծ օրը, և տղաներն իրենց թիթեղյա ամաններով պատրաստ կանգնած էին՝ ջուր վերցնելու, այգիները ջրելու համար, եթե, իհարկե, այն գար:

Եվ իսկապես, ջուրը սկսեց հոսել նախօրոք փորված փոքրիկ առուններով՝ գնալով ավելի ու ավելի առատանալով: Ցնծութունն անսահման էր: Պատանիներն անմիջապես սկսեցին իրենց թիթեղյա ամանները ջուր լցնել: Այդ ընթացքում մի խելոք գտավ, որ հողով պատվարելով՝ կարելի է առունները ճյուղավորել, և բոլորն իսկույն սկսեցին իրագործել այդ հայտնագործութունը: Հողը ջրվեց, և շատ շուտով այդ փոքրիկ այգիները կծլարձակեն: Իսկ երեխաների սրտերում, որ երբեք չեն մոռանա այս հիշարժան իրադարձութունը, կծլարձակի մի նոր ըմբռնում այն մասին, թե ինչի կարող է հասնել մարդն իր աշխատանքով:

Այստեղ կար նաև մանկապարտեզ փոքրիկների համար, իսկ մեծահասակ աղջիկների ու տղաների համար՝ աշխատանքային դպրոցներ, ուր ընդգրկված էին արհեստագործական տարբեր ճյուղեր՝ բազմաթիվ բաժիններով, կային հյուանի, ատաղձագործի, թիթեղագործի ու կոշկակարի արհեստանոցներ, կարի արհեստանոց աղջիկների համար, ուր սովորեցնում էին նաև հյուսել, ձեռքի աշխատանքներ ու ժանեկագործություն: Մենք եղանք նաև նրանց աշխատանքների ցուցահանդեսում: Տղաների պատրաստած գործիքներն ամենազեղեցիկներն էին: Ակնհայտ էր, որ երեխաներն արհեստների նկատմամբ հատուկ ընդունակություններ են ցուցաբերել և ստացել առաջնակարգ գիտելիքներ:

Հատկապես հուզիչ էր, երբ դիտում էինք կուլյրերի աշխատանքը: Նրանք նույնպես սովորել էին ձեռքի աշխատանք և պատրաստում էին խոզանակներ, սանրեր ու նմանատիպ առարկաներ, որտեղ կարողանում էին օգտագործել շոշափելու իրենց եղանակը: Նրանք ինձ նվիրեցին երկու հրաշալի խոզանակ, մեկը՝ հագուստի, մյուսը՝ մազերի, որոնք մինչև այժմ օգտագործում եմ: Մեծահասակ տղաներից մեկն իր իսկ պատրաստած գործիքներով արտադրում էր արտակարգ նուրբ սանրեր: Դժվար է կուլյրերին, նրանց անսահման թախծոտ դեմքերին նայելը: Կուրուքունն այստեղ հաճախ հանդիպող երևույթ է, այն մեծ մասամբ առաջանում է լայն տարածում գտած աչքերի մի տեսակ հիվանդությունից: Այստեղից էլ առավել կարևորվում է կուլյրերի սովորելու և օգտակար դառնալու հանգամանքը:

Չենք կարող չխոսել նաև այն դպրոցների մասին, որտեղ ամերիկացի հմուտ հիվանդապահուհիները մեծահասակ աղջիկներին սովորեցնում էին

հիվանդներին խնամելու գործը: Սա ևս շահագանց կարևոր խնդիր է երկրի հոգսերը թեթևացնելու ուղղութիւնը:

Ննչարաններում երեխաների մահճակալներն երկհարկ էին, մեկը մյուսի վրա դրված: Յուրաքանչյուր սրահում կար այդպիսի մի քանի հարյուր մահճակալ: Ննչարանները մաքուր էին, ընդարձակ ու լուսավոր, սակայն ձմռանը չէին տաքացվում, շնայած ջերմաստիճանը կարող էր լինել զրոյից քսան աստիճան ցածր: Ճաշարանում միանգամից ճաշում էին 5000 երեխա՝ շարք-շարք նստած նեղ սեղանների շուրջ: Տեսանք, թե ինչպես նրանք զինվորական կարգապահութիւնով, ջոկատ առ ջոկատ քայլելով, բաժանվեցին իրենց սեղաններին: Ճաշարանը և կերակրման այս ձևը ղեկավարում էր մի նախկին հայ գնեորակ՝ գեղեցկագեմ, սպիտակամորուս, տարեց մի մարդ, որ ինքն էլ յոթ երեխայի տեր էր և սրտառուչ անձնագոհութիւնով, հոգով ու մարմնով նվիրված իր աշխատանքին: Դրա համար էլ երեխաները նրան մեծարում էին որպես իրենց հայր:

Պարոն Բիշի սեփական տանը հաճելի նախաճաշից, մասնաճյուղի կլինիկա և կույրերի դպրոց կատարած այցից հետո մեկնեցինք քաղաք՝ այցելելու բամբակի մանածագործարան, որը նոր-նոր գործող, մեկ ամսվա պատմութուն ունեցող մի մեծ ֆաբրիկա էր: Նախատեսված էր ընդարձակել ֆաբրիկան, որպեսզի կարելի լիներ կտոր գործել այստեղ արտադրվող ամբողջ բամբակից: Մենք շրջեցինք ֆաբրիկայում, ծանոթացանք գործվածքների տարբեր տեսակների: Ըստ ներկայացված փորձամուշնների կարելի է ասել, որ արտադրվում էր գերազանց որակի կտոր: Հաստոցների մոտ կանգնած գրեթե բոլոր աղջիկները եկել էին «Մերձավորարևելյան նպաստամատուցի» հաստատութուններից: Զարմանալի էր, թե ինչ պրակտիկա էին ձեռք բերել նրանք մեքենաների հետ մեկամսյա աշխատանքից հետո և թե ինչ ճշգրտութիւնով էին կատարում ամեն ինչ՝ առանց կանգ առնելու: Դա նրանց ստացած դաստիարակութեան լավագույն վկայութիւնն էր:

Ֆաբրիկայում շրջելուց հետո մեզ առաջնորդեցին մի տեսակ լսարան կամ ժողովասրահ, որը հավանաբար ծառայում էր զեկուցումների, թատերական ներկայացումների և նմանօրինակ նպատակների: Այստեղ հավաքվել էին ֆաբրիկայի բոլոր բանվորները: Ինձ ողջունեցին ջերմ ճառով, որը թարգմանվեց: Պատասխանեցի մի քանի բառով՝ մաղթելով նրանց կարևոր գործին նորանոր հաջողութիւններ: Ելույթ ունեցող բանվորներից մեկն ասաց, որ ի հիշատակ այցելութեան ցանկանում են ինձ նվիրել իրենց աշխատանքի մի քանի նմուշներ: Ձեռքի տակ եղածն, իհարկե, դեռ կոպիտ է, ասաց նա, սակայն հույսով ենք, որ շատ շուտով կկարողանանք արտադրել ավելի նուրբ գործվածքներ: Այդ խոսքի վրա դահլիճից առաջ եկան մի քանի տղամարդ՝ ծանրաբեռնված ֆաբրիկայի տարբեր տեսակի բամբակյա գործվածքների՝ սպիտակեղենի և երեսուրբիչների մեծ հակերով: Առաջինը, որ մտածեցի սարսափահար ու դժկամ, այն էր, թե ինչպես պետք է ես այդ ամենը տուն տանեմ այդքան երկար ճանապարհով: Սակայն նրանց բարի ցանկութիւնը խորապես հուզեց ինձ, և ես իմ շնորհակալութիւնը հայտնեցի, որքան որ կարողացա: Ինձ հաջողվեց նաեւ այդ հրաշալի գործվածքը տանել տուն՝ նորվեզիա, և այստեղ, իմ տանը, դրանք ամեն օր գործածութեան մեջ են:

Հանդիպումից հետո մեքենաներով դուրս եկանք քաղաքից և ուղղվեցինք դեպի Լրփաշայ: Գետի արևելյան ընդարձակ ափին տեղավորված էր «Մերձավորարևելյան նպաստամատուցի» ամառային ճամբարը, ուր տղաները խումբ-խումբ հանգստանում էին մի քանի շաբաթ: Այստեղ նրանք ապրում էին վրաններում, կոփում մարմինը, լողանում գետում, զբաղվում մարմնամարզութեամբ և տարբեր խաղերով: Ծամբարը բարեկարգ էր, յուրաքանչյուր

վրանում տեղավորված էր 32 տղա: Ծամբարի պետը վայելչատես արտա-
քինով մի հայ էր, նախկին՝ ոուսական բանակի գլխավոր շտաբի սպա, որ
դաստիարակում էր տղաներին զինվորական կարգապահության մեջ:

Պատանիների «ետճաշյա թեյի» ժամն էր: Նրանք խաղահրապարակից
չոկատ առ չոկատ քայլելով եկան ու նստեցին բացօթյա երկար սեղանների
շուրջ: Բոլոր տղաներն առողջ ու ամրակազմ էին, և հաճելի էր դիտել նրանց
քայլելիս՝ սպիտակ վերնաշապիկներ ու մինչև ծնկները հասնող տաբատներ
հագած: Յուրաքանչյուրը ստացավ իր աման ապուրը և հացը: Մենք ևս մաս-
նակեցեցինք ճաշին՝ նստելով նրանց հետ երկար սեղանի շուրջ, կիսելով նը-
րանց զվարճությունն ու ուրախությունը:

Իչավ երեկո, մենք հրաժեշտ տվեցինք ճամբարի կենսախինդ պետին,
ճամբարում աշխատող տիկնանց ու պատանիների հրաժեշտի ուրախ բացա-
կանչությունների ներքո մեքենաներով ճանապարհ ընկանք դեպի ետ՝ սարա-
հարթ:

Սրանով ավարտվեցին այս երկու օրվա իրադարձությունները: Մենք այ-
ցելել էինք Լեւինականի մոտ տեղավորված «Մերձավորարևելյան նպաստա-
մատուլցի» հաստատությունների տարբեր մասնաճյուղեր, տեսել 11000 որբ
երեխաներ պատսպարող այդ տներն ու դպրոցները, մի թիվ, որ վերաբերում
է մեկ շրջանին միայն: Մեզ վրա մեծ տպավորություն էին թողել երեխաների
հետ տարվող դաստիարակչական լայնամասշտաբ աշխատանքները, որոնք
ուղղված էին (և շարունակվում են) հասարակության գործուն անդամ պատ-
րաստելուն: Եվ չպետք է մոռանալ, որ այդ երեխաներից շատերը, որ այժմ
առույգ, զվարթ ու օրինապահ մարդիկ են, տառաջիործն ճողոպրել են մահ-
վան ճանկերից: Այդ թվում և Սարդարապատի մոտ գտնվող գաղութի հա-
զարավոր այն երիտասարդները, որ նույնպես դաստիարակվելով այս տնե-
րում, այժմ զբաղված են նոր հողերի յուրացմամբ: Այստեղ, իրոք, շատ բան
է արվել՝ բուժելու պատերազմի հասցրած վերքերը:

Երկրի հյուսիսային շրջաններից մեկում «Մերձավորարևելյան նպաստա-
մատուլցը» բացել էր երկրագործական դպրոց, և փոքր-ինչ հյուսիս նրան
կից գործում էր գյուղատնտեսական մասնաճյուղ, ուր զբաղված էին բազ-
մաթիվ դեռահաս տղաներ, որոնք հիմնավորապես ծանոթանում էին գյուղա-
տնտեսությունը: Հետաքրքիր կլիներ տեսնել նաև այդ հաստատությունները,
սակայն ժամանակը սուղ էր: Մեծ էր մեր ցունկությունը լինելու նաև երկրի
հյուսիսային շրջաններում, որոնք շատ են տարբերվում մեր տեսած հարավի
և արևմուտքի հարթություններից, ուստի ամերիկացիները սիրով գործն այն-
պես կարգավորեցին, որ հաջորդ օրը մի ամերիկյան և մի կառավարական
մեքենաներով Երևան վերադառնանք հենց այդ ճանապարհով: Բանից պարզ-
վեց, որ եթե ճանապարհին փոքր-ինչ շեղվենք հյուսիս գտնվող լեռները,
դեպի Ստեփանավան, ապա կայցելենք նաև «Մերձավորարևելյան նպաս-
տամատուլցի» երկրագործական դպրոցը և Երևան կհասնենք երեկոյան: Մենք
հեռագրեցինք դպրոց՝ հայտնելով մեր հաջորդ օրը նախաճաշին տեղ հաս-
նելու մասին: Վերջին անմոռաց երեկոն էինք անցկացնում ամերիկացի մեր
հյուրընկալների հետ:

Գեմմաներեկից քարգմանեց՝
ԷՎԵԼԻՆԱ ՄԱԿԱՐՅԱՆԸ

Э. А. МАКАРЯН — Совесть Европы. — Публикация приурочена к 135-летию великого гуманиста ученого и путешественника Фритьофа Нансена. В 1925 г. Нансен посетил Армению, внес свой посильный вклад в организацию помощи возвращавшимся на родину беженцам армянам, активно участвовал в поисках путей решения армянского вопроса. Вниманию читателей предлагаются отрывки из книги Фритьофа Нансена, название которой переводится с норвежского «По Армении», с английского и французского «Армения и страны Ближнего Востока», а с немецкого — «Обманутый народ».